



ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 60 -Ա « 23 » 05 2020թ.

ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

ՆԱՐԵԿ ԲԱԲԱԾՅԱՆ



ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ
ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և վճարումների բաժնի (այսուհետ՝ Բաժնի) աշխատանքային ծավալների կտրուկ ավելացել է՝ պայմանավորված Բաժնի կանոնադրական խնդիրներից կոնկրետ գործառույթից բխող աշխատանքային ծանրաբեռնվածությամբ (2021 թվականի պետական բյուջեի հայտի լրամշակում, 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի նախապատրաստում և մշակում, 2020-2021 թվականների եռամսյակային, կիսամյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմում և ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացում), և որի իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) Տնտեսագիտություն մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն, Հանրային ծառայության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

2) ունենա տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

3) հաշվապահական հաշվառման ոլորտի անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում և այդ բնագավառում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «ՀՀ բյուջետային համակարգի մասին», «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին», «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին», «Գանձապետական համակարգի մասին», «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքների, «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանի, իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի և «ՀԾ-հաշվապահ» ծրագրի անհրաժեշտ իմացություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մեկ տարի ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետն մեկ տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքը, մասնավորապես՝

ա. 2021 թվականի բյուջեի հայտի լրամշակում.

բ. 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտի նախապատրաստում և մշակում.

գ. համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը հաստատելու մասին» թիվ 27-Ն հրամանի պահանջների՝ եռամսյակային, կիսամյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների կազմում և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն սահմանված ժամկետներում ներկայացում.

դ. Կոմիտեի ենթակայության ՊՈԱԿ-ներից եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների ստացում, ստուգում, ամփոփում և սահմանված ժամկետներում ներկայացում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը վեց ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է, ըստ փուլերի՝ վեց ամիսը մեկ և ամփոփիչ փուլ: Աշխատանքը գնահատվում է չորս ամիսը մեկ ներկայացված հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«դ»-ը ենթակետորով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջարդյունքների չափանիշներն են՝

ա. 2021 թվականի բյուջեի հայտը լրամշակված է.

բ. 2022-2024 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի հայտը մշակված է.

գ. համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2017 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների օրինակելի փաթեթը հաստատելու մասին» թիվ 27-Ն հրամանի պահանջների՝ եռամսյակային, կիսամյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմված են և սահմանված ժամկետներում ներկայացված են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն.

դ. Կոմիտեի ենթակայության ՊՈԱԿ-ներից եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվությունները ստացված, ստուգված, ամփոփված և սահմանված ժամկետներում ներկայացված են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն: